ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 381-18
18 սեպտեմբեր 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 64 կարգադրությունը, Սարչապետ համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 160-Ա որոշումը և աշխատակազմի քարտուղարի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 63, 64 և 65 հրամանները:

Առդիր՝ 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կապ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 160-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԾՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-018-0010-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՎՈՐԳ ՄԵԼՍԻԿԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշումը, քաղաքացի Գևորգ Անտոնյանի (անձնագիր՝ AK 0632094, տրված՝ 11.10.2010 թվականին) դիմումը, 26.07.1994 թվականին կազմված <<Սեփականության վկայագիրը>>, <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 2018 թվականի մարտի 5-ին կայացրած դատարանի վճիռը՝ գործ թիվ ԼԴ3/0025/02/18, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրինական հատկացված 1309.0քմ և կից 229.5քմ հողամասերը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
Հաշվի առնելով այն, որ փաստացի չափագրման արդյունքում հողամասի մակերեսը կազմում է 1538.5քմ և այն, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (1975-1977թթ.)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի ուժով ճանաչել Գևորգ Մելսիկի Անտոնյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Արծնիի բնակավայրի 06-018-0010-0011 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 1538.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի չափերը որոշվում են Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված և <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծով:

3. Ճանաչել Գևորգ Մելսիկի Անտոնյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Արծնիի բնակավայրի 06-018-0010-0011 կադաստրային ծածկագրով 1538.5քմ հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ համաձայն <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ.Արծնի, փողոց 4, տուն 1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային տարածքային ստորաբաժանմունքում:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018 թ. սեպտեմբեր 17
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 64

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 26-րդ հոդվածներով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկ.՝1.2-1/ Անժելա Մարտիրոսյանին սույն թվականի սեպտեմբերի 17-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ գործուղել ք. Վանաձոր մասնակցելու «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:

2.Անժելա Մարտիրոսյանին վճարել համապատասխան ծախսերի փոխհատուցում:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018թ. սեպտեմբերի 14
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 63

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի, հաշվի առնելով Սվետլանա Բարսեղյանի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի գրավոր համաձայնությունը և ելնելով անհրաժեշտությունից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սվետլանա Բարսեղյանին 2018 թվականի սեպտեմբերի 17-ից հետ կանչել 2018 թվականի իր ամենամյա արձակուրդից:

2. Սվետլանա Բարսեղյանի 2018 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված 4 աշխատանքային օրերը տրամադրել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2018թ. սեպտեմբեր 14
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 64

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ Մ. ՏՈՄԵՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի, հաշվի առնելով Մեսրոպ Տոմեյանի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի գրավոր համաձայնությունը և ելնելով անհրաժեշտությունից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Մեսրոպ Տոմեյանին 2018 թվականի սեպտեմբերի 17-ից հետ կանչել 2018 թվականի իր ամենամյա արձակուրդից:

2. Մեսրոպ Տոմեյանի 2018 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված 8 աշխատանքային օրերը տրամադրել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2018թ. սեպտեմբեր 14
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 65

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և 26-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1.Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկ.՝3.1-1/ Սվետլանա Բարսեղյանին, 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.՝3.3-4/ Շուշան Տոմեյանին, 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.՝3.3-1/ Կարինա Կագրամանովային, 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.՝3.3-3/ Սեմյոն Պողոյանին, 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.՝3.3-5/ Մեսրոպ Տոմեյանին և 2-րդ կարգի մասնագետ/ծածկ.՝3.3-6/ Արա Բաղդասարյանին սույն թվականի սեպտեմբերի 17-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ գործուղել ք. Վանաձոր մասնակցելու «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:

2. Սվետլանա Բարսեղյանին, Շուշան Տոմեյանին, Կարինա Կագրամանովային, Սեմյոն Պողոյանին, Մեսրոպ Տոմեյանին և Արա Բաղդասարյանին վճարել համապատասխան ծախսերի փոխհատուցում:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2018թ. սեպտեմբերի 14
գ.Սարչապետ